



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Բաբայանը, Գևորգ Գյուրջյանը, Արշավիր Խաչատրյանը, Սուսաննա Կարապետյանը, Լուսինե Հակոբյանը, Սամսոն Հարությունյանը, Գինեվան Ղազարյանը, Խաչիկ Մուրադյանը, Արսեն Սիրունյանը, Արտեմ Ստեփանյանը, Մերի Տոնոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝  
Գուրգեն Հակոբյան, Հասմիկ Հակոբյան, Արևիկ Եփրեմյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սևակ Միրաբեյլյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի  
N 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՐԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

**1. Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 10 նիստի օրակարգը.**

- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 191 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
- Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք տրամադրելու մասին
- Սեփական կարիքների համար ընդերքի օգտագործման մասին
- Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

- 5) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
- 6) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
- 7) Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղումներ կատարելու և հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
- 8) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
- 9) Հողամասերի փոխանակություն կատարելու և Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 126 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
- 10) Հողամասերի փոխանակություն կատարելու մասին
- 11) Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 129 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
- 12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքը (Հրազդան քաղաքը, Լեռնանիստ, Ջրառատ, Սոլակ և Քաղսի բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Կոտայք 1» համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին
- 13) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
- 14) Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին
- 15) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 200 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
- 16) Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Կոստան Ջարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին
- 17) Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Ջաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» հիմնարկի տարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին
- 18) Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Ջաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» հիմնարկի տարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին
- 19) Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Ջաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» հիմնարկի տարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին
- 20) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի 6-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**



**ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N°191 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՐԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N° 191 որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱՔՈՒՐ ՀՐԱԶԴԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՐԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

1. Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող GAZ 310200 մակնիշի, 794 CZ 61 պետական համարանիշ ունեցող թեթև մարդատար տրանսպորտային միջոցը (նույնականացման համարը (VIN) XTH31020011008014, թողարկման տարեթիվը՝ 2001):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136/

Լսեցին

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՔՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին» օրենսգրքի 48-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1. Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի նոր գերեզմանոցի հարակից տարածքից Հրազդան համայնքի տնտեսական և կենցաղային սեփական կարիքների բավարարման նպատակով արդյունահանել, մինչև 2մ խորությամբ՝ 10000մ<sup>3</sup> ավազակոպճային բնահող:
2. Որոշման մասին սահմանված կարգով տեղյակ պահել լիազոր մարմին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48<sup>1</sup>-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 243/15 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 20.0քմ մակերեսով (ավտոտնակ տեղադրելու նպատակով), 12 000 (տասներկու հազար) դրամ տարեկան վարձավճարով, 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/*



Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48<sup>1</sup>-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց 33/5 հասցեում գտնվող բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասը՝ 9.8քմ մակերեսով (հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով), 20 000 (քսան հազար) դրամ տարեկան վարձավճարով, 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139/

Լսեցին

**ՀՐԱՀԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48<sup>1</sup>-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց 33/7 հասցեում գտնվող բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասը՝ 17.9քմ մակերեսով (հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով), 20 000 (քսան հազար) դրամ տարեկան վարձավճարով, 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140/

Լսեցին

**ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՂՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածով.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված հետևյալ հողամասերը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն.

1) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 51/2 հասցեում գտնվող 319.1քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0502-0001-ից),

2) Հրազդան քաղաքի Զրառատ թաղամաս 335/1 հասցեում գտնվող 480.0քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0164-0211-ից),

3) Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 10-րդ փողոց 11/1 հասցեում գտնվող 962.7քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-063-0097-0006-ից):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /Կցվում է որոշում N 141/

Լսեցին

**ՀՐԱՂԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1. Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:

3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4. Սույն որոշման գործողության ժամկետը սահմանել 6 (վեց) ամիս:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142/

Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՉԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 126 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 30-րդ կետով և հիմք ընդունելով Միշա Ադամյանի 2024 թվականի հուլիսի 31-ի դիմումը.

1.Թույլատրել Հրազդան քաղաքի Ջորավար Անդրանիկի պողոտա 81/1 հասցեում գտնվող Միշա Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05032024-07-0157, գաղտնաբառ՝ 4TBS4MB4Q1PL) 409.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը փոխանակել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25072024-07-0229, գաղտնաբառ՝ BDFXBUFBEDLH) Հրազդան քաղաքի Ջորավար Անդրանիկի պողոտա 79/5 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 404.0քմ մակերեսով համարժեք հողամասի հետ՝ քանի որ Հրազդան քաղաքի Ջորավար Անդրանիկի պողոտա 81/1 հասցեում գտնվող հողամասով անցնում է կոյուղագիծ:

2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի «Հողամասերի փոխանակություն կատարելու մասին» N 126 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143/

Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 30-րդ կետով և հիմք ընդունելով Յուրիկ Պետրոսյանի 2024 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը.

1.Թույլատրել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 6/10 հասցեում գտնվող Յուրիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20122022-07-0108, գաղտնաբառ՝ PFMZRZRLD5QRP) 50.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը փոխանակել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12082024-07-0158, գաղտնաբառ՝ SWKNLCBSKG8H) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց 15 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 49.6քմ մակերեսով համարժեք հողամասի հետ՝ համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 129 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՃԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Դեկլարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի «ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը հաստատելու մասին» N 129 որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ (ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԸ, ԼԵՌՆԱՆԻՍՏ, ԶՐԱՌԱՏ, ՍՈՒԿ և ՔԱՂՍԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՐԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ «ԿՈՏԱՅՔ 1» ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Դեկլարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող



միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի N 2-4 դրական եզրակացությունը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքը (Հրազդան քաղաքը, Լեռնանիստ, Ջրառատ, Սուլակ և Քաղսի բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Կոտայք 1» համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 146-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 215-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 215-Ն որոշման հավելվածը համայնքի ղեկավարի առաջարկությամբ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 147-Ն/

Լսեցին

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշումը և Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 120/1 բնակարանի բնակիչ Գարիկ Պողոսյանի 2024 թվականի հունիսի 28-ի դիմումը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 215-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10.07.01.51 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ օգնություն տրամադրել Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 120/1 բնակարանի բնակիչ Գարիկ Պողոսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 148/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07 -Ի N 200 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ/**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, հաստատելու մասին» N 200 որոշման NN18, 21, 22 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1, 2, 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 149/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 06-ի N 39 որոշման 1-ին կետը և Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 125 շենքի, 10 բնակարանի բնակիչ Ավետիս Հակոբի Ղասաբյանի 2024 թվականի սեպտեմբերի 03-ի դիմումը.

1. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքում գտնվող 70



(յոթանասուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքը 6 (վեց) ամիս ժամկետով վարձակալությամբ տրամադրել Հրազդան համայնքի բնակիչ Ավետիս Ղասաբյանին՝ հայկական պարի դասընթացներ անցկացնելու համար:

2. Ամսական վարձավճարը սահմանել 35 000 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 150/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՀԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 06-ի N 39 որոշման 1-ին կետը և Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 8 շենքի, 5 բնակարանի բնակիչ Զաշմեն Ավագի Ավագյանի 2024 թվականի հուլիսի 31-ի դիմումը .

1. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» հիմնարկի շենքում գտնվող 50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքը 6 (վեց) ամիս ժամկետով վարձակալությամբ տրամադրել Հրազդան համայնքի բնակիչ Զաշմեն Ավագյանին՝ պարի դասընթացներ անցկացնելու համար:

2. Ամսական վարձավճարը սահմանել 25 000 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 151/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՀԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 06-ի N 39 որոշման 1-ին կետը և Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 239 շենքի, 31 բնակարանի բնակիչ Արծրուն Սլավիկի Մեժլումյանի 2024 թվականի հուլիսի 17-ի դիմումը.

1. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկի շենքում գտնվող 50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքը 6 (վեց) ամիս ժամկետով վարձակալությամբ տրամադրել Հրազդան համայնքի բնակիչ Արծրուն Մեծլումյանին՝ ճապոնական շոտոկան օլիմպիական կարատեի պարապմունքներ անցկացնելու համար:

2. Ամսական վարձավճարը սահմանել 25 000 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 152/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՀԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՄՇԿԱՌԻԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 06-ի N 39 որոշման 1-ին կետը և Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 89 շենքի, 23 բնակարանի բնակիչ Դավիթ Խաչիկի Հակոբյանի 2024 թվականի օգոստոսի 23-ի դիմումը.

1. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկի շենքում գտնվող 50 (հիսուն) քառակուսի մետր ընդհանուր տարածքը 6 (վեց) ամիս ժամկետով վարձակալությամբ տրամադրել Հրազդան համայնքի բնակիչ Դավիթ Հակոբյանին՝ կիրորյու կարատեի պարապմունքներ անցկացնելու համար:

2. Ամսական վարձավճարը սահմանել 25 000 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 153/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով.



1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի 6-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 10-ին ժամը 12:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-16

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N154/

Ավագանու անդամներ՝

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՎԻՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱԿԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՂԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱԿԻՏ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը





Հավելված  
Հրազդան համայնքի ավագանու  
2024 թվականի սեպտեմբերի 10-ի  
N135 որոշման

Հավելված 2  
Հրազդան համայնքի ավագանու  
2023 թվականի դեկտեմբերի 7-ի  
N 191 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ ԵՎ  
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 109

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔ ԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ Ը	ԾԱԾԿԱԳ ԻՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ /սահմանվում է հաստիքային 1 միավորի համար/	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	ԱՇԽԱՏԱՎԱՐՔԻ ԶՎՓԸ
	<b>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ</b>					
1	Համայնքի ղեկավար	1		590,000		590,000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1		477,000		477,000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1		420,000		420,000
4	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1		407,000		407,000
5	Համայնքի ղեկավարի խորհրդական	2		400,000		800,000
6	Համայնքի ղեկավարի օգնական	1		287,000		287,000
	<b>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ</b>					
7	Սոլակ բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
8	Քաղսի բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
9	Լեռնանիստ բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
10	Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավար	1		321,000		321,000
	<b>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ</b>					-
11	Աշխատակազմի քարտուղար	1	1.1-1	477,000		477,000
	<b>Քաղաքաշինության և հողաշինության բաժին</b>					-
12	Բաժնի պետ	1	2.1-1	407,000		407,000
13	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	2.3-1	274,000		274,000
14	Գլխավոր մասնագետ	1	2.3-2	274,000		274,000
15	Գլխավոր մասնագետ	1	2.3-3	274,000		274,000
16	Առաջատար մասնագետ	1	3.1-1	223,000		223,000
17	Առաջատար մասնագետ	1	3.1-2	223,000		223,000
18	Առաջատար մասնագետ	1	3.1-22	223,000		223,000
19	1-ին կարգի մասնագետ	1	3.2-1	198,000		198,000
	<b>Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին</b>					-
20	Բաժնի պետ	1	2.1-2	407,000		407,000
21	Գլխավոր մասնագետ	1	2.3-4	274,000		274,000
22	Առաջատար մասնագետ	1	3.1-3	223,000		223,000
23	Առաջատար մասնագետ	1	3.1-4	223,000		223,000
24	1-ին կարգի մասնագետ	1	3.2-2	198,000		198,000
	<b>Ֆինանսատնտեսագիտական բաժին</b>					-
25	Բաժնի պետ	1	2.1-10	407,000		407,000
26	Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ	1	2.2-4	327,000		327,000
27	Գլխավոր մասնագետ	1	2.3-25	274,000		274,000



28	Գլխավոր մասնագետ	1	2.3-26	274,000		274,000
29	Գլխավոր մասնագետ	1	2.3-27	274,000		274,000
30	Գլխավոր մասնագետ	1	2.3-28	274,000		274,000
31	Առաջատար մասնագետ	1	3.1-23	223,000		223,000
32	Առաջատար մասնագետ	1	3.1-24	223,000		223,000
	<b>Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին</b>					-
33	Բաժնի պետ	1	2.1-4	407,000		407,000
34	Գլխավոր մասնագետ	1	2.3-10	274,000		274,000
35	Գլխավոր մասնագետ	1	2.3-11	274,000		274,000
36	Գլխավոր մասնագետ	1	2.3-12	274,000		274,000
37	Գլխավոր մասնագետ	1	2.3-13	274,000		274,000
38	Առաջատար մասնագետ	1	3.1-7	223,000		223,000
39	Առաջատար մասնագետ	1	3.1-8	223,000		223,000
40	Առաջատար մասնագետ	1	3.1-9	223,000		223,000
41	Առաջատար մասնագետ	1	3.1-10	223,000		223,000
42	Առաջատար մասնագետ	1	3.1-11	223,000		223,000
43	Առաջատար մասնագետ	1	3.1-12	223,000		223,000
44	1-ին կարգի մասնագետ	1	3.2-3	198,000		198,000
45	1-ին կարգի մասնագետ	1	3.2-4	198,000		198,000
46	1-ին կարգի մասնագետ	1	3.2-6	198,000		198,000
	<b>Տնօրինի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին</b>					-
47	Բաժնի պետ	1	2.1-11	407,000		407,000
48	Գլխավոր մասնագետ	1	2.3-29	274,000		274,000
49	Գլխավոր մասնագետ	1	2.3-30	274,000		274,000
50	Առաջատար մասնագետ	1	3.1-25	223,000		223,000
51	Առաջատար մասնագետ	1	3.1-26	223,000		223,000
	<b>Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժին</b>					-
52	Բաժնի պետ	1	2.1-6	407,000		407,000
53	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-2	327,000		327,000
54	Գլխավոր մասնագետ	1	2.3-24	274,000		274,000
55	Գլխավոր մասնագետ	1	2.3-17	274,000		274,000
56	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	2.3-18	274,000		274,000
57	Առաջատար մասնագետ	1	3.1-15	223,000		223,000
58	Առաջատար մասնագետ	1	3.1-16	223,000		223,000
59	1-ին կարգի մասնագետ	1	3.2-7	198,000		198,000
60	1-ին կարգի մասնագետ	1	3.2-8	198,000		198,000
	<b>Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին</b>					-
61	Բաժնի պետ	1	2.1-7	407,000		407,000
62	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-3	327,000		327,000
63	Գլխավոր մասնագետ	1	2.3-19	274,000		274,000
64	1-ին կարգի մասնագետ	1	3.2-9	198,000		198,000
65	1-ին կարգի մասնագետ	1	3.2-10	198,000		198,000
66	1-ին կարգի մասնագետ	1	3.2-11	198,000		198,000
67	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-1	160,000		160,000
68	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-2	160,000		160,000
69	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-3	160,000		160,000
70	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-4	160,000		160,000
	<b>Իրավաբանական բաժին</b>					-
71	Բաժնի պետ	1	2.1-8	407,000		407,000
72	Գլխավոր մասնագետ	1	2.3-20	274,000		274,000

73	Գլխավոր մասնագետ-ՔԿԱԳ գործառույթների իրականացնող	1	2.3-21	172,000		172,000
74	Առաջատար մասնագետ-ՔԿԱԳ գործառույթների իրականացնող	1	3.1-17	160,000		160,000
75	1-ին կարգի մասնագետ	1	3.2-12	198,000		198,000
	<b>Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժին</b>					-
76	Բաժնի պետ	1	2.1-9	407,000		407,000
77	Գլխավոր մասնագետ	1	2.3-22	274,000		274,000
78	Գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	2.3-23	274,000		274,000
79	Առաջատար մասնագետ	1	3.1-18	223,000		223,000
80	Առաջատար մասնագետ	1	3.1-19	223,000		223,000
81	Առաջատար մասնագետ	1	3.1-20	223,000		223,000
82	Առաջատար մասնագետ	1	3.1-21	223,000		223,000
83	1-ին կարգի մասնագետ	1	3.2-13	198,000		198,000
	<b>Գնումների և զարգացման ծրագրերի բաժին</b>					-
84	Բաժնի պետ	1	2.1-12	407,000		407,000
85	Գլխավոր մասնագետ	1	2.3-31	274,000		274,000
86	Գլխավոր մասնագետ- զարգացման ծրագրերի պատասխանատու	1	2.3-32	274,000		274,000
87	Առաջատար մասնագետ	1	3.1-27	223,000		223,000
88	Առաջատար մասնագետ	1	3.1-28	223,000		223,000
	<b>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ</b>					-
89	Վարորդ	2		267,000		534,000
90	Գործավար	1		248,000		248,000
91	Գործավար	1		184,000		184,000
92	Անվտանգության պատասխանատու	2		240,000		480,000
93	Մեդիա օպերատոր	1		274,000		274,000
	<b>ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ</b>					-
94	Փորձագետ-որոշակի գործառույթներ համակարգող	7		250,000		1,750,000
95	Անասնաբույժ (0.5 դրույք)	4		80,000		320,000
96	Ցանցային ադմինիստրատոր	1		234,000		234,000
97	Սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման պատասխանատու	1		234,000		234,000
	<b>ԸՆԴՊԱՄԵՆՆԸ</b>	<b>109</b>				<b>28,890,000</b>





Հավելված  
Հրազդան համայնքի ավագանու  
2024 թվականի սեպտեմբերի 10-ի  
N 142 որոշման

ՑԱՆԿ

Աճուրդային կարգով օտարման ենթակա հատվածների.

h/h	Հողամասի Հասցեն	Կադաստրային Շածկա գիրքը	Մակե րեսը (քմ)	Օնկ նարկա յին գինը  ՀՀ դրամ	Նպա տակա յին նշանա կույթ յունը	Գործառնա կան նշանակույթ յունը
1	Ք. Հրազդան 13	07-001-0288-0116	5351.1	12 000 000	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվա ծքների օբյեկտների	Էներգետիկ այի
2	Ք. Հրազդան, Հարավային թաղամասի Նոյեմբերյան փողոց 25/1	07-001-0662-0042	257.1	1 500 000	Բնակա վայրերի	Բնակելի կառուցապ ատ ման
3	Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 1/23	07-001-0109-0053	400.0	2 800 000	Արդյունաբերո ւթյան, ընդերքօգտագ ործման և այլ արտադրակա և նշանակույթյա ն	Արդյունաբե րական օբյեկտների

**ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքը  
(Հրազդան քաղաքը, Լեռնանիստ, Ջրառատ, Սուլակ և Քաղսի բնակավայրերը)  
ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Կոտայք 1»  
համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը  
հաստատելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքը (Հրազդան քաղաքը, Լեռնանիստ, Ջրառատ, Սուլակ և Քաղսի բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Կոտայք 1» համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀ ՔԿ-ԳՀԱՇՁԲ-23/2 07.04.2023թ.), քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրին համապատասխան և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով:

**Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածի, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի N 2-4 դրական եզրակացության, ՀՀ Կոտայքի մարզպետի 19.04.2024թ. N 01/03.1/05088-2024 գրության անհրաժեշտություն է առաջացել վերը նշված փաստաթուղթը ներկայացնել ավագանու հաստատմանը:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.**

Նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման և նվազման մասին.**

Նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.**

Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կանոնակարգելու վերը նշված ոլորտը:



Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ





Հավելված  
Հրագրան համայնքի ավագանու  
2024 թվականի սեպտեմբերի 10-ի  
N 147-Ն որոշման

Հավելված  
Հրագրան համայնքի ավագանու  
2023 թվականի դեկտեմբերի 7-ի  
N215-Ն որոշման

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		3338755,435	2774412,900	622180,335
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160), այդ թվում՝	7100	565371,100	565371,100	x
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112 + տող 1113), այդ թվում՝	7131	160790,500	160790,500	x
1111	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ		9795,000	9795,000	x
1111Ա	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		7325,000	7325,000	x
1111Բ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ		370,000	370,000	x
1111Գ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈՂԱԿ/		675,000	675,000	x
1111Դ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌԱՆԻՍ/		675,000	675,000	x
1111Ե	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		475,000	475,000	x
1111Զ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌՍ/		275,000	275,000	x
1112	ԳՈՒՑՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		9250,000	9250,000	x

1112Ա	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		7325,000	7325,000	x
1112Բ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ		370,000	370,000	x
1112Գ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		1230,000	1230,000	x
1112Դ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		0,000	0,000	x
1112Ե	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		150,000	150,000	x
1112Զ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		0,000	0,000	x
1112Է	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌԱՍ/		25,000	25,000	x
1112Ը	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԾԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈՂԱԿ/		150,000	150,000	x
1113	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ		141745,500	141745,500	x
1113Ա	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ		52750,000	52750,000	x
1113Բ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ		54050,000	54050,000	x
1113Գ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌԱՍ/		480,000	480,000	x
1113Դ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈՂԱԿ/		11087,500	11087,500	x
1113Ե	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈՂԱԿ/		132,250	132,250	x
1113Զ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		11960,000	11960,000	x
1113Է	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		28,750	28,750	x
1113Ը	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ.ԱՆՁԱՆՑԻՑ /ԼԵՌՆԱՆԻՍ/		11050,000	11050,000	x
1113Թ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՔԱՂՍԻ/		207,000	207,000	x
1113Ժ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁԱՆՑԻՑ /ՍՈՂԱԿ/		0,000	0,000	x



1113Բ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆՁԱՆՑԻՑ /ՋՐԱՌԱՍ/		0,000	0,000	x
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	323639,800	323639,800	x
1121Ա	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից)		271001,800	271001,800	x
1121Բ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից)		5688,000	5688,000	x
1121Գ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /Ջրառատ/		700,000	700,000	x
1121Դ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /ՍՈՂԱԿ/		13000,000	13000,000	x
1121Ե	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /ՔԱՂՄԻ/		16000,000	16000,000	x
1121Զ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) /ԼԵՌՆԱՆԻՍ/		17000,000	17000,000	x
1121Է	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ԼԵՌՆԱՆԻՍ		100,000	100,000	x
1121Ը	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ՋՐԱՌԱՍ		50,000	50,000	x
1121Թ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ՍՈՂԱԿ		50,000	50,000	x
1121Ժ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) ՔԱՂՄԻ		50,000	50,000	x
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	57940,800	57940,800	x
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144 + տող 1145), այդ թվում՝	71452	57940,800	57940,800	x
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից՝		0,000	0,000	x
1133	աա) Հիմնական շինությունների համար		14740,000	14740,000	x
1133Ե	աա) Հիմնական շինությունների համար /ՍՈՂԱԿ/		0,000	0,000	x
1133Ը	աա) Հիմնական շինությունների համար /ՔԱՂՄԻ/		0,000	0,000	x
1133Թ	աա) Հիմնական շինությունների համար /ՋՐԱՌԱՍ/		0,000	0,000	x
1133Ժ	աա) Հիմնական շինությունների համար /ԼԵՌՆԱՆԻՍ/		0,000	0,000	x

1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0,000	0,000	x
1134Ա	-մինչև 20 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0,000	0,000	x
1134Բ	- 20 ն ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0,000	0,000	x
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		600,000	600,000	x
1135Ա	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ՄՈՂԱԿ/		0,000	0,000	x
1135Բ	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ՔԱՂՄԻ/		0,000	0,000	x
1135Գ	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ՋԸԱՌԱՏ/		0,000	0,000	x
1135Դ	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար /ԼԵՌՆԱՆԻՍ/		0,000	0,000	x
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		200,000	200,000	x



1136Ա	զ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ՍՈՒԱԿ/		0,000	0,000	x
1136Բ	զ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		0,000	0,000	x
1136Գ	զ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ՋՐԱՌԱՏ/		0,000	0,000	x
1136Դ	զ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար /ԼԵՌՆԱՆԻՍ/		0,000	0,000	x
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և/կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		15468,000	15468,000	x
1137Ա	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		7500,000	7500,000	x
1137Բ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		5400,000	5400,000	x
1137Գ	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՋՐԱՌԱՏ/		56,000	56,000	x
1137Դ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՋՐԱՌԱՏ/		56,000	56,000	x
1137Ե	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՍՈՒԱԿ/		600,000	600,000	x
1137Զ	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՔԱՂՍԻ/		600,000	600,000	x
1137Է	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ԼԵՌՆԱՆԻՍ/		500,000	500,000	x

1137Ը	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ԼԵՌՆԱՆԻՍ/		216,000	216,000	x
1137Թ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՍՈԼԱԿ/		240,000	240,000	x
1137Ժ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում /ՔԱՂՍԻ/		300,000	300,000	x
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		0,000	0,000	x
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		5600,000	5600,000	x
1139Ա	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար /ՔԱՂՍԻ/		1200,000	1200,000	x
1139Բ	Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար /ՍՈԼԱԿ/		0,000	0,000	x
1139Գ	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար /ՀՐԱԶԴԱՆ/		4400,000	4400,000	x
1139ԴԱ	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏԼՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՇԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ		1680,000	1680,000	x
1139ԴԲ	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏԼՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՇԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ /ՔԱՂՍԻ/		120,000	120,000	x
1139ԴԳ	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏԼՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՇԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ /ՍՈԼԱԿ/		120,000	120,000	x
1139ԴԴ	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ /ԼԵՌՆԱՆԻՍ/ԳՏԼՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՇԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՈՒԹՅՈՒՆ		60,000	60,000	x



1139ԴԵ			0,000	0,000	x
1139ԴԶ	ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏԵՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ, ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ. ՀԵՂ-ԵՐԻ ՎԱՃ. ԹՈՒՑԼՏՎ. ՀԱՄԱՐ		1380,000	1380,000	x
1140Ա	- առևտրային օբյեկտների համար		0,000	0,000	x
1140Բ	- հանրային սնունդի և զվարճանքի օբյեկտների համար		0,000	0,000	x
1140Գ	- բաղնիքների (սաունաների) համար		0,000	0,000	x
1140Դ	- խաղատների կազմակերպման համար		0,000	0,000	x
1140Ե	- շահումով խաղերի կազմակերպման համար		0,000	0,000	x
1140Զ	- վիճակախաղերի կազմակերպման համար		0,000	0,000	x
1140Է	Է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սնունդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար /ՔԱՂՄԻ/		450,000	450,000	x
1140Ը	ՔԱՂՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅՈՒՆ		15,000	15,000	x
1140Թ	Է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սնունդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		650,000	650,000	x
1140Ժ	Է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սնունդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		100,000	100,000	x
1141	ը) Համաքաղաքային կանոնների համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		0,000	0,000	x
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		11960,000	11960,000	x
1142Ա	- ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար		0,000	0,000	x
1142Բ	- Թունդ ալկոհոլ./սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար		0,000	0,000	x
1142Գ	- այլ արտաքին գովազդի համար		11960,000	11960,000	x
1142Դ	- դատարկ գովազդային վահանակների համար		0,000	0,000	x

1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		0,000	0,000	x
1144	ի) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		80,000	80,000	x
1145	լ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		550,000	550,000	x
1146.	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		3022,800	3022,800	x
1146.Ա	Հրազդանի Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		2732,000	2732,000	x
1146.Բ	Քաղսիի հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվ. համար		130,000	130,000	x
1146.Գ	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար /ՍՈՒԱԿ/		160,800	160,800	x
1146Ա	- հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		0,000	0,000	x
1146Բ	- ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		0,000	0,000	x
1147	- համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		700,000	700,000	x
1148	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉ.ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂ.ՀՈԳԵՀԱՆԳՍԻԻ ԾԻՍԱԿԱՏ.ԾԱՌԱՅ.ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ	455200	1875,000	1875,000	x
1148Ա	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉ.ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂ.ՀՈԳԵՀԱՆԳՍԻԻ ԾԻՍԱԿԱՏ.ԾԱՌԱՅ.ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ /ՔԱՂՍԻ/	455200	0,000	0,000	x
1149	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԼՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ		250,000	250,000	x
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	7146	23000,000	23000,000	x
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1152 + տող 1153), այդ թվում՝		23000,000	23000,000	x



1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		12000,000	12000,000	x
1153Ա	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		11000,000	11000,000	x
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165 ), այդ թվում՝	7161	0,000	0,000	x
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1162 + տող 1163 + տող 1164), որից՝		0,000	0,000	x
1162	ա) Եկամտահարկ		0,000	0,000	x
1163	բ) Շահութահարկ		0,000	0,000	x
1164	գ) Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0,000	0,000	x
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0,000	0,000	x
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝	7300	2149880,235	1585537,700	564342,535
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7311	0,000	0,000	x
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,000	0,000	x
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7312	0,000	x	0,000
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,000	x	0,000

1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7321	0,000	0,000	x
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,000	0,000	x
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7322	0,000	x	0,000
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,000	x	0,000
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝	7331	1585537,700	1585537,700	x
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		1578783,300	1578783,300	x
1251Ա	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ /ՋՐԱՌԱՏ/		0,000	0,000	x
1251Բ	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ /ՍՈՂԱԿ/		0,000	0,000	x
